ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 269-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի՝ «Պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը սահմանելու մասին» N 269-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում) **67-րդ կետի 1-ին ենթակետում հստակ սահմանված է ատեստավորում անցած ուղղությամբ համատեղությամբ աշխատելու դեպքում մանկավարժական աշխատողը ինչպես է ստանալու լրավճար:**

Որոշման 2-րդ կետը սահմանում է ատեստավորում անցած ուղղությունից տարբերվող ուղղությամբ համատեղությամբ աշխատելու դեպքում լրավճար ստանալու կարգավորումը, որը սակայն հստակ չէ այն դեպքում երբ ատեստավորում անցած ուղղությունից տարբերվող ուղղությամբ ատեստավորվելու և նույն կամ այլ հաստատությունում աշխատելու դեպքում մանկավարժական աշխատողը ինչպես է ստանալու լրավճարը։

Ելնելով վերոգրյալից և՝ 67-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխանությունը 1-ին կետի պահանջների հետ ապահովելու նպատակով, անհրաժեշտություն է առաջացել կատարել նշված փոփոխությունը։